




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



01 JAN 2009
19 NOV 2010

391.99
Ա-82

ՊՐՈԼԵՏՆԵՐ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՍԵՔ

10/II 1930/2

Ա Ր Ա Ջ Ի

պ.

Հիմնական

Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք Ն Ե Ր

1009
13168

ՀԱՅԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Ս.Ս. ՄԱՍԻՍԻԱՆԻ ԲԻՍԼՈՒԹՅԱՆ
7/VI-1922
ԻՄԵՆԱ, ՄԵՍԻՍԻԱՆԻ

**ԴԱԴ
Բ
ԼՈՑ**

Դ Ա Ր Բ Ն Ո Ց
№ 1 Թ Ի Յ Լ Ի Ս 1923

21 FEB 2013

0005 MAR 1 0

003
10-8-1


ՀԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Վրաստանի Գրողների Ասոցիացիայի Հայկական
Սեկցիայի:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

3-րդ տպարան Ժ. Տ. Գ. Ա. Գրեգոր Բաժ. Գուշկին. 4. № 3.

1923



Արամյան

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՍՆԵՅԻԱՅԻ ԿՈՂՄՈՅ

Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Հայկական Սեկցիան ձեռնարկում է մի շարք գեղարվեստական բրոշյուրների հրատարակութեան, վորոնց կարիքը ամենասուր կերպով զգացվում է բանվոր-գյուղացիական մասսաների կողմից:

Պատմության բնմիջ անհետացող բուրժուազիայի հետ այսօր հրապարակից աստիճանաբար դուրս են ընկնում և նրա դրական-գեղարվեստական արժեքները: Սիմվոլիզմը, ինդիվիդուալիզմը, միստիցիզմը և ֆուտուրիստական տեխնիցիզմը, վորպես կազմալուծվող բուրժուազիայի սեռիցիոն մտայնություն ու հոգու հարազատ արտահայտություն, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այլևս չեն արձագանքում բուրժուազիայի դասակարգային գրականության թունավորումից արթնացած մասսաների սրտում:

Առայժմ գեղարվեստական ստեղծագործության ու հատկապես գնահատումների շուրջը քառասյին վիճակ է ստեղծվել: Պրոլետարական միասնական Ֆրոնտը դեռ այդ հարցերի շուրջը չի բյուրեղացել ու կազմակերպվել հարկավոր չափով: Բուրժուական գեղարվեստի ֆուտուրիստական տեխնիցիզմը շարունակում է ազմկել ծպտյալ կերպով պրոլետարական գիմակի տակ: Կեղծ-պրոլետարական անհեթեթ քննադատականների անգիտակ զոհերն են դառնում մեր մի շարք յերիտասարդ տաղանդավոր ու անտաղանդ գրողներ:

Սակայն պրոլետարիատը—ինչպես իր քաղաքական կուլի ամենախճճված մոմենտներին—կը կարողանա այս անգամ ել իր առողջ ինստիտուտով ու ստեղծագործական ներքին մղումով անշեղ գծել իր հաղթանակի ճշմարիտ ուղին և խուսափել հոռետեսություններից ու սայթաքումներից նաև գեղարվեստական ստեղծագործության քառսի մեջ:

Բանվոր դասակարգն արդեն ունի մի շարք գրողներ, վորոնք Ֆիզիքապես ու հոգեպես պատկանելով պրոլետարիատին՝ համակված են կոլլեկտիվիստական ռեալիզմով, միանգամայն բացասելով կասկածելի «վորոնումները»: Խորհրդային Վրաստանի Պրոլետարական Դրոզների Ասոցիացիայի Հայկական Սեկցիան նպատակ ունի մեր համեստ իրականության մեջ կատարել իր պարտքը կուլտուրական ճակատում: Այդ նպատակով նա ձեռնամուխ է լինում պրոլետարական գեղարվեստական գրադարանի հրատարակության, տալով մի կողմից մեր պարբերական մամուլի մեջ ցրված, մյուս կողմից արդի յերիտասարդ գրողների ինքնուրույն պատմվածքներ ու վեպիկներ, վորոնք կարող են բանվորների ու գյուղացիների համար հարազատ ու առողջ լինեցնանության նյութ ծառայել:

Այդ շարքի առաջին բրոշյուրը պատկանում է մեր Ասոցիացիայի անդամ Ընկ. Արազիի գրչին:

Կ Ի Ս Ա Տ Տ ՈՒ Ն Ը

Այդ են ժամանակն եր, յերբ ամեն ինչ շարժվեց...

Յերբ մութ խորշերից լույս աշխարհ յեկավ լուռ տանջանքը...

Յերբ բացվեցին փակ բերանները...

Են ժամանակ Սարգիսը վերադարձավ քաղաքից և հայտարարեց գյուղի շուկայում.

Ել հարուստ-աղքատ չկա... սրանից գենր բոլորս մեկ ենք...

Ու ոգևորված՝ նա պատմում էր, շշմեցնում լսողներին իր բերած նոր մաքերով:

Ապա յեկան քաղաքից և ուրիշները՝ նույն հովերով, և ամբողջ որը գյուղի շուկան գլրդում էր նոր խոսքերից...

Եդ որերին եր անա, յերբ Սարգիսը ուրախվարթ սկսեց իր նոր տան շենքը:

Նա բարձրացրեց պատերը, բայց չկարողացավ ծածկել ու սարքել իր տունը...

Ու անցան տարիներ...

Սարգիսը մնացել էր գյուղում. քաղաքում այլևս գործ չկար:

Նա մասն եր գալիս գլխիկոր, ինքն իր մեջ խորասուզված, աշխատելով աննկատելի դարձնել իրեն:

Խոնացել եր նրա չուխան, վորի վրա յերևում էյին յերկու մեծ կարկատաններ, դժգուշներ եր նրա դեմքը, ասես նույնպես խոնացել...

Իսկ նրա տունը դարձյալ կիսատ եր...



Անցել եր են ժամանակը...

Կյանքը նորից իր նախկին հունի մեջ եր մտել:

Գյուղի շուկայում դարձյալ իրենց առաջվա դիրքերն էյին գրավել յերկու վաշխառուները — հաստափոր Սանդրոն և նիհար Մարտիրոսը:

Ու ամեն անգամ, յերբ Սարգիսը մռայլ անցնում եր շուկայով, հաստափոր Սանդրոն՝ շրջապատված իր մարդկանցով՝ բղավում եր լիստատ, հրճվալից ձայնով ու հեզնոզ շեշտով:

— Սարգիս, բա ասում իր ել հարուստ-աղքատ չկա, բա ինչի՞ չես տունդ շինում... կիսատ ա մնացել...

Իսկ Մարտիրոսը սպասում եր, վոր նա մոտենա իրեն, ու կամացուկ ասում եր.

— Սարգիս, կարելի ա փող ա հարկավոր, արի տամ, տունդ վերջացրու...

Յեվ նրա շորացած, խոշոր դեմքի վրա խաղում եր մի խորամանկ ժպիտ, վորից փայլում էյին նրա մանր, խոր ընկած աչքերը:

Սարգիսը դադարում եր այդ խոսքերից, վորոնք հիշեցնում էյին են անցած օրերը, յերբ ինքն եր հարձակվում այդ յերկուսի վրա:

Նա աշխատում եր արհամարհել, լուռ մնալ, բայց յերբ Սանդրոն չափն անցնում եր, ել չեր համբերում:

Շատ մի յեղակալել, ասում եր նա. մի առվով վոր ջուր ա գնացել, մին ել կը գնա... Սաղ աշխարհի տունն ա կիսատ մնացել, մենակ իմը հո չի... Լավ իմանաս, են որը ելի կը գա, տունս կը թամամեմ, քու աչքն ել կը հանեմ...

— Հա, հա, հա... մին էլ կը գա... հոհոում եր Սանդրոն, ավելի ևս լայնացնելով իր տեղը, և նրա հետ հոհոում էյին իր շուրջը պատած մարդիկ...

— Ծիծաղիր, ծիծաղիր, տեղդ լենացել ա... ամա լավ միտդ պահիր, քանի ես խալխի ցավը կա, են որերը ուղտի նման ելի կը չոքեն դռանդ...

Ասում եր Սարգիսը, դառը հեզնանքով չափում վտից ցզլուխ Սանդրոյին ու հեռանում դանդաղ քայլերով:

Գնում եր նա լուռ ու մտախոհ ու իր այրվող աչքերով մի յերբ փնտռում այդ նեղ փողոցում...

Յեվ փորպես մի արձան են անցած օրերի՝ խորհրդավոր լուսթյամբ հանդիպում եր նրան իր կիսատ տունը...

1913 թ.

Ա Ր Ե Վ Ը

Հսկում եք, պարոն... կանգներ մի փոքր, յիս
ձեզ կը պատմեմ բոլորը սկզբից...

Դուք գնում եք... լավ, յես կը պատմեմ ծա-
ղիկներին ու խոտերին...

Սիրուն կակաչներ, դե լավ լսեցեք արևի
պատմութիւնը:

Աղջիկս հիմանդ եր...

Գիտե՞ք, նա ել ձեզ նման գեղեցիկ մի ծա-
ղիկ եր, նախշունիկ դեմքով, փոսկեզանդուր մա-
ղերով...

Աղջիկս հիմանդ եր...

Բժիշկը յեկավ, իջավ մեր բնակարան... նա
տխուր եր... Ինչո՞ւ... Հա, հիշում եմ, նա չեր
սիրում ներքեի հարկերը...

Նա իջավ ներքե, նայեց իմ աղջկան, նայեց
սենյակի պատերին.

— Խոնավ ե, սաաց, պիտի փոխեք բնակա-
րանը, պիտի արեկող սենյակ ձարեք:

Քանի՞ յերեխա ունեք, հարցրեց:

— Յերեքը ունեյինք, մեռան... ֆապեղ ե այս
մեկը... Ազատեք իմ աղջկան, նա մեր տան
փոզին ե...

Նա ինչ-վոր դեղ գրեց ու տխուր դեմքով
դուրս գնաց:

— Հայրիկ, ինչ գրեց բժիշկը, հարցրեց աղ-
ջիկս:

— Արե գրեց, սիրելիս, արե գրեց, վոր քեզ
վրա փայլի և դու լավանաս...

Ու յես գնացի արե փնտռելու, գնացի շատ
հեռու և վերջապես գտա արեկող բնակարան...

Սիրուն կակաչներ, արևի կարմիր գա-
վաղներ, աւելի լավ չե՞ր ձեզ մօտ բերեյի իմ
փոսկեծամիկ աղջկան...

Դուք նրան կը զուգեյիք կարմիր ու կանաչ...

Բայց, հա, գիտեմ, դուք հաց չեյիք տալ իմ
փոսկեծամիկ աղջկան... գիտեմ, դուք սնվում եք
վաղորդյան ցողով...

Հսեք, ես դեռ չեմ վերջացրել...

Մյուս առավոտ յես պիտի տանեյի իմ Լուսի-
կին արևի տունը, բայց յերբ լուսացավ, նա ինձ
կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը...

Յետո յեկան մարդիկ և նրան տարան...

Մենք չեյինք թողնում, բայց նրան տարան
թաղերու...

Յեւ յերբ փոսկեծամիկ աղջիկս հեռացավ մե-
զանից, մեր տան փոզին ել նրա հետ գնաց...

Մենք բոլորս այրվեցինք լալուց... և յես
դարձա արևի հիմանդ...

Յես գնում եյի նստում փոքրիկ գերեզմանի
մօտ և սպասում արեածաղին:

Ու միշտ տեսնում եյի իմ Լուսիկին արեը
զրկած և իր մազերը փռած նրա վրա...

Սակայն յերբ պատմում եյի արևի մասին,
կինս ու մայրս չեյին հավատում. նրանք կար-
ծում եյին, թե յես խելագար եմ, ու փոքրում եյին
այրված, ցամաքած աչքերով...

Ու մի որ ել յես դիմեցի արևին.

— Հոր արե, սաացի, մի մեծ գանգատ ու-
նեմ քեզանից. ինչո՞ւ դու մի շողքդ իննայեցիք
իմ աղջկան, ինչո՞ւ դու սպանեցիր ու տարար
իմ Լուսիկին...

Նա օխրեց ու մի՞նեց:

— Գնա, ասաց, գնա հայտնի՜ր աշխարհին, ասա վերեւի հարկը արեւի շողքերը խլեց, ստվեր ձգեց ներքեւի հարկին և սպանեց են վռակեներ աղջկան...

1913. թ.

ՎԻՐԱՎՈՐ ԹՈՂՈՒՆԸ

Յես անցնում եմ սալահատակ մայթերով...

Անցնում եմ հալածված են շքեղ լույսերից, քարերի տապից, խեղդող փոշուց...

Կուրծքս հիվանդ ե, աչքերս մի՞նում են, ծնկներս ծալվում, բայց դու, սեւերես, կրկնում ես անվերջ՝

— Գնա, գնա, գնա...

Յես քեզ վաղուց ե ճանաչում եմ, ով սեւերես կարիք...

Դու հալածում ես ինձ... Դու աշխարհի խորթ մայրն ես, վոր գիշեր-ցերեկ հետևում ես մարդկանց...

Հիշում ես... Դու տարաբ ինձ այն մեծ խանութը. տես, վորքան ուտելիղ են կա այնտեղ... Յե՛վ այդ ծով-ուտելիղենների մեջ յես քաղցած եյի ու ճանտալի նման չեյի կարող ձեռք տալ և վոչ մի բանի... Նստած այնտեղ, յես՝ մի դալուկ որիորդ՝ միայն գանձում եյի տիրոջ փողերը...

Հիշում եմ, յերբ առաջին անգամ վոտ դրի այնտեղ, յերբ սերը գիջեց մորս աղաչանքին և ինձ ընդունեց:

Նա ինձ հավանեց և գազանի հրձվանքով յերեւի ասաց իր մտքում.

— Կը գա ժամը և գառը կը լինի վողջակեզ...

Նա ինձ ընդունեց և առժամանակ յես հանգիստ առա, կարճատե հանգիստ...

Նա միշտ նայում եր ինձ ճարպալից աչքերով, իշխողի ժպիտով և լուռ հրամայում, վոր կատարեմ իր կամքը:

Նա ցանկանում էր ինձ, իսկ դու, սեւերես
կարիք, շշնջում էյիր դռան արանքից.

— Զոհվիր, գառնուկս... Թե չհպատակվես,
ցուրտ ձմռան կը մնաս մայիսերի վրա...

Յե՛վ ահա մի որ նա հայտնեց իր կամքը:

Գազանի ժպտով նա մեկնեց իր ձեռքերը,
ուզեց ճաշակել իր ստրկուհուն, բայց համբույրի
տեղ մի սպտակ իջավ նրա մտեղ դեմքին...

Նա ապշեց, կատաղեց, ուզեց հարձակվել
նորից... Բայց յես արդեն դուրսն էյիր...

Յես յեկա ձեզ մոտ, ս'վ անհյուրընկալ մայ-
թիր, յես ընկերացա քեզ, ս'վ սևազգեստ կարիք...

Ո՛, թող կործանվի սալահատակ ես քաղաքը,
խիտ անտառ բանի նրա տեղ, յերթամ ու հանգ-
չեմ վայրի գազանների մոտ...

Պատմեմ նրանց կսկիծը սրախ, յերգեմ այր-
ված յերազները կույսի...

Բույրեր, յերգեցեք ինձ հետ յերգը կործան-
ման, յերգեցեք այրված յերազները կույսի...

Յես անցնում եմ սալահատակ մայիսերով,
անցնում եմ հալածված են շքեղ լույսերից, քա-
րերի տապից, խեղդող փոշուց...

Կուրծքս հիվանդ ե, աչքերս մթնում են,
ծնկներս ծալվում, բայց դու, սեւերես, կրկնում
ես անվերջ՝

— Գնա, գնա, գնա...

1913 թ.

ԱՐՅՈՒՆՈՏ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Ամեն առավոտ, արհեստանոց գնալիս, յես
կանգ էյի առնում մի քանի բոպեյով են շքեղ
տան պարսեղի առաջ և հրճվանքով նայում
գարմանայի գույնզգույն ծաղիկներին:

Բայց ամեն անգամ յես հեռանում էյի դուր
մտածմունքներով:

— Յերանի ձեզ, ծաղիկներ, ասում էյի. ձեզ
այդպես քնքույշ պահում, գուրգուրում են, ձեզ
նույնիսկ աշնան ցուրտ գիշերները խսիրներ են
ծածկում, վոր չմըսեք, իսկ ինձ՝ որ չի անց-
նում, վոր չծեծեն...

Յես իմ փոքրիկ տեղովս այնպես էյի մտա-
ծում, վոր մարդս մի ծաղիկ ել չարժե...

Բայց մի առավոտ, աշնան առավոտ յես ա-
տեցի այդ ծաղիկները:

Այդ որը մի դժբախտ որ եր ինձ համար:

Վարպեան ինձ հանձնել եր նորոգելու մի
զույգ կոշիկներ, իսկ ինքը գնացել եր իր գոր-
ծերով:

Յես ել ուշքս ու միտքս տվել էյի փողոցում
խաղացող աշակերտներին և շարունակ նրանց
կողմն էյի նայում: Մեկ ել տեսնեմ՝ մեխը ծուռ
խփվեց ու ձեղքեց կոշիկի կաղապարը:

Հենց են գլխից յես առում էյի այդ կաղա-
պարները, վորոնք հիշեցնում էյին ինձ մեռելի

վորքեր, և շատ անգամ տեսնում եյի նրանց յերազում:

Վարպետը վերադարձավ յերեկոյեան գազա-
զած. յերեւում եր գործը, ավելի շուտ քեֆը՝ չէր
հաջողվել, որն ել գուր կորել եր:

Նա իսկույն իմացավ իմ դժբախտութեան
մասին և կատաղած սկսեց ինձ ծեծել:

Մինչև այժմ ել սարսուռ և անցնում մար-
մնովս, յերբ հիշում եմ այդ ծեծը. դա մի շտենը-
ված բան եր. կարծես նա վճռել եր միանգա-
մից վերջ տալ իմ դոյութեանը: Նա դեռ յերկար
կրծեծեք ինձ, յեթե պատահամար ներս չմտնեք
իր ծանոթ կոշկակարը: Նրանից քաշվելով՝ վար-
պետը բավականացավ միայն ինձ փողոց դուրս
ձգելով:

Աղի-աղի լաց լինելով, դուրս ընկա փողոց
և քայլերս ուղղեցի դեպի վարպետի տունը: Բայց
ճամբին կանգ առա՝ փոքր ինչ հանգստանալու
և լացի հետքերը ջնջելու համար:

Տուն գնալիս մտածում եյի, թե ինչպես
միշտ՝ այս անգամ ել վարպետը կը հանգստանա ու
կըմոտանա... Բայց սխալվեցի:

Տուն ներս մտնելուն պես վարպետը նո-
րից հարձակվեց և մի քանի հարված տալով
դուրս դցեց փողոց...

Գնա՛, կորի՛ր, ել չերեաս, թե չե կը սպա-
նեմ...

Այլ ևս տուն վերադառնալ չեյի կարող:
Կանգնել եյի փողոցում շփարած, սիրտս լքրտ-
լով, ու ցածր ձայնով լաց եյի լինում:

Իսկ աշնան քամին վզգում եր ու վզգում:

Նա փշաքաղում եր մարմինս, կարծես վոս-
կորներին մեջ եր անցնում, մտրակում եր,

քշում ինձ, վոչ մի տեղ հանգիստ չտալով...

Անցնում եյի դեռ ու դեռ ու սարսափով
մտածում... Ռւր գնամ, ինչպես անցկացնեմ այդ
հավիտենական դաժան գիշերը:

Նայում եյի դիմացի լուսավոր պատուհան-
ներին ու յերանի տալիս այն տղաներին, վորոնք
տաք անկողիններում, մոր վայփայտնքով գուր-
գուրած, անուշ-անուշ քնած եյին:

Իսկ իմ մայրը... նա շատ հեռու եր, գյու-
ղում և անշուշտ իսկի չէր կասկածում, թե ինչ
որն և ընկել իր վորդին...

Այգալիսի դրութեան մեջ յես մոտեցա այն
դիմացի մեծ տանը:

Նայեցի պարտեզի կողմը և իսկույն մի
միտք անցավ գլխովս:

Յես հիշեցի, վոր աշնան ցուրտ գիշերներին
այդ ծաղիկների վրա խտրներ եյին ծածկում,
վոր չմրսեն:

Յեմ հենց այդ առավոտ յես տեսել եյի այդ
խտրները:

Ինչ կը լինի, մտածում եյի, յեթե անցնեմ
պարտեզը, մտնեմ այն խտրների տակ և պա-
տապարվեմ այս դաժան գիշերը: Առավոտը շատ
վաղ վեր կը կենամ, կը հեռանամ, չեն նկատիլ ինձ,
իսկ յեթե նկատեն ել, միթե չեն ներիլ, յեթե ի-
մանան իմ դրութեանը...

Լավ նայեցի չորս կողմը, տեսա մարդ չկա
ու մի ակնթարթում բարձրացա ցանկապատի
վրայով և իջա պարտեզը:

Ծառ խտրներին տակ ու մի կերպ վտան-
քըս կծկելով՝ պատապարվեցի: Գետինը խոնավ
եր: Ծաղիկների հոտը շմեցնում եր ինձ, ու
յերկար ժամանակ քունս չէր տանում:

Որվա ցնցումները դեռ տանջում էին ինձ։
Բայց վերջապես յես քնել եյի և շատ խորը։

Սակայն իմ զարթելը շատ դառն էր...

Յերագի պես զգացի, կարծես ինչ-վոր փլվեց
ու վրաս ընկավ։ Սուր, ասեղի նման ծակծկող
ցավը կրկնվեց, ու յես վեր թռա...

Հիշում եմ, պայծառ ուր եր. արևն ընկել էլ
վրաս ու տաքացրել։

Բայց մի ակնթարթում ամեն ինչ աչքիցս
ծածկեց մի հրեշավոր դեմք, մեծ մորթի փա-
փախով, վորը արջի նման կատաղած՝ ինձ հար-
վածում էր։

— Շուն, ավագակ, գոռում եր նա. ինչ
կասի իմ տերը. լավ և քո գլուխը մեռնի, քան
թե ես ծաղիկները փչանամ։

Ասում եր ու կոպիտ հարվածներ տալիս,
նախ փայտով, ապա ձեռներով։

Մեկ վեր կացա տեղիցս, բայց նա նորից
հարվածելով վայր գցեց ինձ։ Քթիցս ու բերա-
նիցս արյուն եր կաթկաթում, իսկ յես կիսար-
թուն դրոթյան մեջ շքմել եյի։

Նորից ճիգ արի, վեր կացա և որորվելով
դուրս փախա պարտեզի բաց դռնով, յեռեկիցս
թողնելով արյան կաթիլների հետքերը ծաղիկնե-
րի ու շեկ ավազի վրա...

Ահա այդ որվանից յես ատեցի ես չքեղ տան
դուգված, դարդարված ծաղիկները... Յեվ ամեն
տեսներիս՝ ինձ թվում է, թե նրանք արյունով են
ջրվում, թվում է, թե են կառ-կարմիր ծաղիկնե-
րը իմ արյան կաթիլներն են...

ԿԱՐՄԻՐ ՀԱՄԲՈՒՅՐԸ

Պատերազմի դաշար են դաշան է, ուր ծա-
ղիկները լալիս են, նույնպես վերավոր և հաշ-
մանդամ...

Մի հատիկ ծաղիկ է շոյում դեմքս, յերբ
մոտեցնում եմ դեռնին, այն ել աշնան դեղին
ծաղիկն է, մանվան ծաղիկը...

Դու, մենավոր ծաղիկ, թող ըմպեմ քո ցողը,
ծարավս առնեմ, թեկուզ մանվան թույն լինի
այդ։

Բայց դու արյունոտ ես... վիրավոր, վիրա-
վոր ինձ նման...

Դիակներ... դիակներ...

Նրանք ընկած են խառնիխուռն, թշնամին
ու բարեկամը միասին։

Յեվ բոլորի դեմքին դրոշմված է մի լարված
անշարժություն, ասես ամեն մեկը մեխել է հի-
շողություն մեջ իր տեսածը և սպասում է, վոր
ահեղ ձայնով հավետ, անմոռաց պատմի աշխար-
հին...

Անդգերը պատվում են վերևում։

Նրանք իջնում են, մոտենում զգուշությամբ,
ապա զգալով մեռելությունը՝ համարձակ հոշո-
տում են մարմինները։

Ահա նրանցից մեկը կացահարում է թափված ուղեղը...

— Հարգանք, ով անդդ, դեպի մարդկային ուղեղը...

Նա արժանի չէր ուրիշ վիճակի... Բայց, գիտեմ, նա ինքը հանգցրեց իր ճրագը, և այժմ քո կերակուրն է... շանթահար ուղեղը...

* * *

Ջուր, մի կաթիլ ջուր...

Շարժվում եմ առաջ օրհասական ճիգով:

Ինչ ել լինի, պիտի փնտռեմ, պիտի գտնեմ անմահական ջուրը...

Հազիվ յերկու քայլի հափ փորսողում եմ ու ընկնում թուլացած:

Դիակները պատել են շուրջս ու չեն թողնում հեռանամ:

Նրանք կանչում են չորս կողմից, հրավիրում են մասնակցելու իրենց լուռ խոսակցության...

Ու հրեղեն խոսքերի մի տարափ է գալիս, ուղեղս այրում...

Տափանելի ուղեղ, դու կը պայթես այս լուռ խոսակցությունից:

Այս լուռությունը մի հզոր ազմուկ է, վորից փրկություն չկա...

* * *

Առջևս ընկած է արյունոտ մի դեմք, հոյակապ մի մարմին ընկած է անշարժ:

Պատահաբար վերարկվի տակից յերևում է

ժամացույցի յերկաթե շղթան, վրան կախված փոքրիկ պատկերով:

Մոտենում եմ մի փոքր, նայում պատկերին, ու սիրտս սկսում է բաբախել ուժգնորեն...

Յերկգիմի պատկեր ե... յերկու իմաստասերների խոհուն ճակատներով:

Յեվ հիշողությունս այրվում է, փնտռելով այն մարդուն, վորի ձեռքին տեսել եմ այդ պատկերը...

Յես քեզ ճանաչում եմ, բարեկամ...

Ո՛ր, լավ կը լիներ՝ չճանաչեյի քեզ, չգատեյի այս անթիվ դիակներից...

Պատմիր, այդ ինչպես յեղավ, վոր մենք թշնամի յենք իրար, վոր իմ ողջունի տեղ գուցե քեզ հանդիպեց իմ դաժան գնտակը...

Պատմիր, պատմիր...

Բայց դու չես կարող խոսել — բերանդ լիքն է արյունով և մահվան խավարը իջել է աչքերիդ...

* * *

Հիշում ես այն յերեկոն, յերբ դուքսը բուք ու ձյուն եր, իսկ են անշուք սենյակում, ուր մենք ժողովվել էյինք, կրակը վառվում եր ոջախում դուրեկան ճարճատյունով: Յեվ մենք, ոտարներս, ի մի հավաքված՝ մտերմացել էյինք այն Մեծ Միության վոգով և խոսում էյինք գալիք օրերից...

Յեվ դու, հիշում ես, ժպիտը դեմքիդ՝ շփում էյիր մատներով այս փոքրիկ պատկերները...

Գիտեմ, ընկեր, ես ոչախում կրակը մարել է արդեն:

Յեվ մութ գիշերներին, շների վռնոցից արթնացած՝ քո փոքրիկ աղան կծկվում է մոր գրկում և հարցնում.

— Հայրիկը յերբ կը գա...

Յեվ մայրը, արցունքները զսպելով՝ ասում է.

— Շուտով, շուտով...

Ասում է ու հավատում, փոր դու կը վերագառնաս ու նորից կը վառես ես հանգած կրակը...

Յերեկոն գալիս է: Լուռ էն թնդանոթները: Ո՞վ հաղթեց, ընկեր, մենք թե դուք, յես թե դու...

Լավում են մարդկային ձայներ: Յեկել են վերավորներին հավաքելու:

Գալիս են շարժում գիակները, ապա հրում են ինձ ու ասում.

— Թող մնա, թող մեր թշնամին փախ ես ամայի դաշտում...

Թող մնանք ես ամայի դաշտում, արյունոտ ընկեր:

Մենք կը սպասենք մութը գիշերվան, ապա կեկենք, կը զարթեցնենք գիակներն անթիվ ու կը քայլենք միասին դեպի քաղաքները քարահատակ...

Բուք ու բորանի հետ մենք ներս կը խուժենք ամենուրեք ու կը հնչեցնենք մեր ձայնը հզոր...

Մենք անհղաղորդ փողեր կը հնչեցնենք, շոփնդ ու շխկոցով կը բանանք փակ դռներ և ներս կը տանենք հողմահար, ցրտահար ճշմարտությունը...

Ու աշխարհից աշխարհ կը նետենք մեր շղթան և հսկա կամարների տակով կանցնենք նոր կյանքի շարքերով...

Տուր ձեռքդ, ընկեր, ընդունիր համբույրս, արյունոտ, կարմիր համբույրս...

Կտրվել է ժամանակի կուռ շղթան. յեկ միացնենք ամուր և ամուր...

Յեկ հանդէնք միասին ես արյունոտ դաշտում մինչև յեկնելը...

— Մինչև յեկնելը...

1915 թ.

Թ Ե Վ Ե Ր Ը

Թաղում էյին հերոսին:

Յեվ լայնարձակ փողոցում տարածվել էր ամբոխի հսկա զանգվածն ու խրոխտ լուսթեամբ հետևում էր դադաղին:

Մի ներքին յերաժշտություն հաղթական նվագով անցնում էր սրտից սիրտ և տանում շարքերը գիակի յետևից:

Թաղում էյին հերոսին...

Նա գնում էր յետևի շարքերում, գլխիկոր, խորատուգված իր մաքերի մեջ:

Կուշտ ու պարարտ նրա դեմքին աններդաշնակ թառել էյին տխուր աչքերն իրենց հանգչող կրակով:

Իր շքեղ վերարկուն՝ փափուկ, մաղե ոճիքով, գատվում էր շրջապատից:

Ու իր քայլերը, անհաստատ, վարանոտ՝ շեղվում էյին շարքերից:

Կար մի րոպե, յերբ նա մտածեց յետ դառնալ, յերբ հուզարկավորությունը ծովեց մյուս փողոցը:

Բայց շարքերը սեղմվեցին նորից, փողոցը բռնվեց մարդկանցով, ու այլևս գնալու տեղ չկար:

Յեվ հոսանքը նրան տարավ...

Անհանգիստ, խռովահույզ, քայլում էր նա, պաշարված շարքերից, պաշարված մտքերից...

Ու աչքերի առաջ մեկ մեկու յետևից պարզվում էյին ծանոթ դեմքերը, վաղեմի ընկերները:

Հիշում էր անցած օրերը, յերբ այս շարքերը խոսում էյին, և նա հասկանում էր այդ լեզուն...

Ահ, այս պատկերը վերջան լրիվ է...

Նա յեւ է այստեղ... այն համառ օրիորդը...

Թերեւս նա մի ուրիշի կինն է այժմ և մոռացել է իրեն, ջնջել հիշողությունից:

Սակայն նա դեռ քայլում է նախկին հաղթական քայլերով...

— Ի՞նչ է կատարվել...

— Յես փոխել եմ իմ պաշտամունքը. յես ընտրել եմ մի ուղի, լայն ու անվրդով...

Ի՞նչ է կատարվել...

Իսկ շարքերը ստվարանում են, փոշին բարձրանում է, ոգը սղափորում, ու լավում է խուլ տրոփյունը վոտքերի...

Ու տանջալից դեմքին, այրվող աչքերին մի հանգրվան է հանգիստ խոստանում:

Կանացի մի զլխարկ քարշում է նրան, հիշեցնում նրա անցած օրերը...

Յերբ քայլում էյին միասին, ուշ գիշերներին լուսթյունը խանգարելով...

Ու սրտի ուժգին բաբախումով, վարանոտ, մոտենում է նրան, կարծես աղբյուրում, վոր տեղ գտնի նորից նրա հայացքում...

— Այդ վնք ալիքն է մեզ իրար բերել...

— Գուցե այս դադաղն է մեզ միացնում, հաշտության մի կամուրջ ձգում...

— Հաշտության... Թերեւս դու կարծում ես՝ չորացած ձյունը նորից կը կանաչի...

— Դու նույնն ես տակավին... Նույն սրլաքները, տանջող և դյուրալի...

— Իսկ դու վորքան փոխվել ես... Նման

այն թուշունին, վոր վանդակի մեջ պարարտա-
նում ե, մոռանում սարերը...

— Այո, գիտեմ կյանքն ինձ փոխել ե...
Բայց կա և վերադարձ...

— Վերադարձ... ո, վոչ, չկան այլևս թե-
վերը... Հիշում ես, դու պատմում եյիր այն մի-
շատներին մասին...

Կյանքի արշալույսին նրանք թուշում են
խմբովին, շողշողում արևի տակ իրենց նորա-
ծիլ թևերով...

Ու սավառնում են հպարտ, ուրախ, գուցե
յերագում՝ ընդմիշտ մնալ բարձր ու ջինջ ողբում...

Բայց ահա նրանք հոգնում են, իջնում
ներքե...

Ու տարված հանգստության տենչով՝ կըր-
ծում են, պոկում իրենց թևերը և ընդմիշտ մը-
նում գետնին...

Ու այնուհետև, գիտեա... նրանք ել չեն
թուշում...

* *

Նայում ե հանկարծ... Միայնակ ե ինքը,
իսկ շարքերը հեռացած...

Յեվ թվում ե նրան, թե հեռվից լսվող յե-
րաժշտությունը իր հուզարկավորումն ե նվա-
զում, և նրա յերևեջներում կրկնվում են անմո-
ռաց խոսքերը՝

— Ու այնուհետև, գիտեա... նրանք ել չեն
թուշում...

1915 թ.

ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

Յես նորից ու նորից վերհիշում եմ այն սե-
նյակը...

Յեվ ինձ թվում ե, յեթե այժմ ել անցնեմ
մայրաքաղաքի են աղքատ թաղով, դարձյալ
կը տեսնեմ նույն տունը, նույն բնակարանը, ան-
փոփոխ, ինչպես առաջ:

Դուռը դարձյալ կը բանա մի պառավ կին,
վորը կը դիտի ինձ իր կասկածոտ, մանր աչքերով,
ապա կառաջնորդի նեղ ու մութ միջանցքով
դեպի այն սենյակը, խոհանոցի կողքին... և նորից
ինձ կը համալի այն բնակարանի վոգին...

* *

Տարրերնակ սենյակ եր:

Առաջին հայացքից վոչ մի առանձին բան
չեյիք նկատի. պղտոր, դեղին պաստառներ, մաշված
հատակ, խղճուկ ուսանողական կահ-կարասիք:

Բայց ահա յերեկոյան վառում եմ հինա-
վուրց մի լամպ, վորի աղոտ, դեղին լույսը իր
տխուր կնիքն է գնում ամեն ինչի վրա...

Աղախներ, արդեն հասավն առած մի կին,
լուռ, ասես պապանձված՝ ներս ե բերում մի հին,
մաշված հեշտաեռ, վորը հազիվ հեռում ե և սեղանի
վրա դնելուն պես՝ հուսահատ մի հոգոց է հա-
նում ու լուռ...

Նայում եմ թեյի բաժակին. նա մի պատ-
կառելի հնությունն ե... Նրա վրա յերևում են

նկարի մնացորդներ, և սով սարսափ... մի մա-
կազրութիւն... յերեսուն տարի առաջ զբաժ...
 * * *

Փորձում եմ նստել աթոռի վրա, բայց նա իս-
կույն թեքվում ե և յես հազիվ ազատվում եմ
վայր ընկնելուց: Նրա փոքրերը կոտրած են ու
մի կերպ ամրացրած:

Յեթե պատահմամբ դիպչում եմ սեղանին
կամ զբաղարակին, նրանք նույնպես սպառնում
են վայր ընկնել:

Յեվ այդպես ամեն ինչ հին եր ու խարխուլ
այդ սենյակում...

Հեշտաեռի մաշված ծորակից դանդաղ, ար-
խուր կաթկաթում եր ջուրը, և ընկնող կաթիլ-
ների ձայնը հնչում եր յերկնք, յերկնք տիրող
լուսթյան մեջ...

Սոհանուցից մերթ ընդ մերթ, կարծես ժա-
մացույցի կանոնավորությամբ, լսվում եր աղա-
խնի խոր հառաչը... Նա կորցրել եր ամեն ինչ
և ապրում եր տխուր հուշերով...

Յեվ անցյալի մեռելային մի տխուր հորձանք
պատում եր ինձ... Յես քայլում եյի ու զգում, թե
չըջանա հետզհետե նեղանում եր... ինչ վոր ա-
վերակներ գալիս, չըջապատում եյին ինձ... Քայ-
լում եյի ծանր շնչով, և մի ձայն կարծես կրկ-
նում եր ականջիս հեշտաեռի ընկնող կաթիլնե-
րին ներդաշնակ:

— Ավերակներ... ավերակներ...

Հարեան սենյակից ժամանակ առ ժամանակ
հասնում եր ականջիս հին ուսանողի ձայնը:

Հաճախ նա բերում եր յերշիկ և ողի, խմում եր
ու քայլում՝ ինքն իր հետ խոսելով: Իր անկապ
մտքերի հետ նա յերեան եր հանում «հավիտե-
նական» ուսանողի հիասթափված սիրտը:

Յես սովոր եյի նրա ամեն մի շարժման:
Մենք հասկանում եյինք միմյանց առանց իրար
հետ խոսելու:

Այնքան մոտ եյինք իրար՝ բաժանված մի
բարակ պատով ու մի փակ դռնով, և վորքան
հեռու միմյանցից...

Յեվ վորպես մի տխուր մեղեդի, նրա անկապ
մտքերի շարքում հաճախ հնչում եյին, դողդո-
ղում իր սիրած խոսքերը.

— Ո՛վ դու, միայնակների աշխարհ...

Ո՛վ դու, միայնակ Ռուսաստան...

Նորից խմում եր ու քայլում, և յերբ տա-
քանում եր, մոռացվում՝ դիմում եր ինձ դռան
յեանից.

— Կուլեգա, ընկեր,

Խմիր դինը ու քայքայվիր,

ես քայքայվող աշխարհի մեջ

Դու ել խմիր ու քայքայվիր...

Պահ մի կանգ եյի առնում փակ դռների ա-
ռաջ ու ակամա շշնջում:

— Ավերակներ... ավերակներ...

* * *

Յերեկոյան ուշ ժամին նեղ միջանցքից լու-
վում եյին պառավ տանտիրուհու զգույշ, քսվող
քայլերը... Կարծես նա գալիս եր հսկելու,
վորպես պահապան, գալիս եր փակելու ամեն
մի ուղի ավերակների այս աշխարհից...



Գիշերը բերում էր մղձավանջ յերազներ...

Ահա յես անցնում եմ ստորերկրյա խավար մի ճամբով... Շուրջս ավերակներ են, և դաժան բուերը աղմկում են չորս կողմս, քաշում փեշերիցս...

Ու յես քրտնաթոր քայլում եմ խորթ ու բորթ կածանով, աչքերս հառած դեպի դռները, դեպի անծայր հեռվում նշմարվող մի լույս:

Յեվ ահա, հասնելով դռներին, լույսին՝ հանկարծ գահավիժվում եմ և զարթնում...

Զարթնում եմ աղմուկից և ի՜նչ եմ տեսնում...

Իմ խարխուլ մահճակալն ընկած փռված է գետնին...

Արևի ճառագայթները նայում են պատուհանից...

Ու ծանր մղձավանջից ազատված՝ յես ժրպտում եյի փայլուն առավոտին...

Դրսից հնչում էր մոտակա գործարանի ահեղ, թանձր սուլոցը. նրան ձայնակցում էյին յերկաթուղու կայարանի շոգեկառքերը, և փողոցներից լսվում էր ապրանքատար կառքերի խուլ զղրղոցը...

Քաղաքը զարթնում էր...

Ու յես մտածում եյի նոր սենյակի մասին...

1916 թ.

ԱՆՑՅԱԼԻ ՆԻՐՅԸ

Քաղաքի բազմամարդ շուկայի արևկող մի անկյունում նստած է ծեր գեներալը:

Նստած է նա մի խարխուլ արկղի վրա ու հենված պատին՝ նիրհում է անշարժ, վորպես մի արձան:

Նրա լայն, խորշոմած դեմքը իբր յերկճյուղ, սպիտակ մորուքով ու ծխախոտից դեղնած յերկար բեխերով՝ քանդակված են հին, անցած վաճառի: Ու թավուտ հոնքերի մեջ խոր ակոսված կնճիռները, վոր յերբեմնի հրամայողին տալիս էյին խրոխտ արսահայտություն՝ այժմ ել վոչ վոքի վրա չեն ազդում, վորպես հնացած, շատ սովոր դիմակները, վորոնցից յերեխաները ել չեն վախենում...

Իր խուռնացած, գինվորական գլխարկը, վորի ճակատին դեռ նշմարվում էր հանած կոկարդի տեղը, ու իր վերարկուն, նույնպես խուռնացած և փայլուն մետաղյա կոճակները սևերի փոխած, պատմում են անցյալի փառքից, վոր այժմ փետրահան է յեղել...

Առջևը փռած մի քանի հնագույն դրքեր և իրեր՝ նա կարծես չի ծախում, այլ միայն հրսկում է, վոր նրանք չչարժվեն տեղից...

Անցյալ դարու պատերազմների պատմություններ, մի գինվորական դասագիրք, հնագույն թվաբանություն, մի կապոց անկազմ գրքեր գինվորական կանոնադրությունների մասին, մի կեդտոտ, փլված աստվածաշունչ և, վերջապես, փամփուշտներից շինած մի սեղանի զարդարանք:

այս ե անա նա շուկա բերել ծախելու...

Շաբաթներով նստած ե նա նույն տեղը, և սակայն իր բերած իրերը մնում են անփոփոխ. և նայողին թվում ե, թե նրանց տերը ցանկություն չունի վոչ ծախելու և վոչ իսկ խոսելու, այլ միայն ննջելու, խոր ու հավիտյան ննջելու...

Անցնում են նրա մոտով շահեհները, նայում են հնության այս պատկերին ու ժպտում...

Յեւ կարծես ամեն անցնող ափսոսում ե խանգարել այս ներդաշնակ, արձանացած լուսթյունը...

Անա մոտենում ե մի պառավ կին, բաց ե անում աստվածաշունչը, ապա վերցնում գիրքը, և մոտ բերելով ծերունուն՝ հարցնում ե.

— Պապի, աս պապի, ի՞նչ արժեք ուտեր գիրքը:

Պապը չի գարթում:

Կինը նորից կանչում ե:

Ծերունին բաց ե անում աչքերը, անթարթ նայում կնոջը, կարծես ուզենալով հիշել, թե վորտեղ ե ինքը և ի՞նչ ե անում, ապա նկատելով իրեն մոտ բերած գիրքը՝ սկսում ե մտաբերել, թե ի՞նչ արժե նա:

— Հարյուր հազար... լավում ե նրա խոսքոտ, մաշված ձայնը:

Կինը, ասես վախենալով այդ տարորինակ, ուրվականին հատուկ ձայնից՝ պատկառանքով վայր ե գնում գիրքը և լուռ հեռանում:

Նորից նիրհում ե ծերունին ու նրա հետ կարծես նիրհում են իր ծախու բերած իրերը...

Ապա մոտենում ե նրան հապաճառ թուրքը, վերցնում ե անկաղմ գրքերի կապոցն ու բարձր ձայնով կանչում.

— Ե՛յ, թավարիշշ, վո՞նց ես ծախում ես գրքերը:

Ծերունին բարձր ձայնից հանկարծ զարթում ե, և զարմացած նայում թուրքին, կարծես ուզենալով իմանալ, թե ի՞նչ կապ կա իր և այդ «փողոցային» մարդու մեջ, ապա վերջապես նկատելով բարձրացած գրքերի կապոցը՝ ձեռքով ծանր ու դանդաղ նշան ե անում, թե չի ծախում...

Նա արդեն մի քանի անգամ փորձել ե և գիտե, վոր այդպիսի թուրքերը քաշով են ուղում առնել գրքերը և գին չեն տալիս...

Ու ննջում ե նորից...

Նիրհում ե ծեր գեներալը, նստած քաղաքի բազմամարդ շուկայում, անխռով ու անշարժ, վորպես մի արձան, և նրա հետ կարծես նույնպես նիրհում են իր շուկա բերած իրերը...

1922 թ.

Ա Ն Ց Վ Ո Ր Ը

Քաղաքի ամենալավ փողոցով՝ յերբեմն փորքան սովոր և այժմ փորքան խորթացած՝ անցնում է նախկին հարուստ Աղասյանը:

Մի ժամանակ նա թեթև սլանում էր ավտոյով, կառքով, առանց փոքր դիպցնելու նույն խակ ամենալավ փողոցի մայթերին...

Այժմ անցնում է նա, հագլիվ փոքերը քարշ տալով, ասես ամեն ինչ յետ է մղում նրան, ամեն ինչ փշերի նման կառչում է շորերից...

Յերբեմնի գեր մարմինը իր ազդեցիկ, հաստ փորով՝ այժմ ներս է ընկել, նիհարել... Ու նրա բկի յերկծալ կաշիները, փոր նրա կարողության ույժն եյին ներշնչում այժմ դատարկ կախ են ընկել ու շարժվում են, փորպես ավելորդ լաթեր...

Մի ժամանակ յերեք բժշկով սլանված այդ մարմինը այժմ բնության կամքին հանձնած թանջում է, հեռում, խարխուլ կառքի նման...

Ծանր շունչը չի հնազանդվում, խեղդում է նրան, ջրակալած աչքերն այրվում են ու ախանջները թշնամ անհանգիստ ժխորով...

Ու շուրջն ասես բոլոր ձայները միացած՝ կանչում են միաբերան.

— Անցիր... անցիր...

Ջեպին բռնած մի կեղտոտ սուպրակ, մեջք մի կտոր հաց՝ գնում է նա ու անիծում և կեանքը և աշխարհը, փոր դարձել է նրա համար մութ գերեզման...

Վողջը անցյալում՝ փորին նա տիրում էր փորպես իշխան, նա կուզեր չքացած լինել այդ անցյալի հետ...

Բայց ի՞նչ... Նա ապրում է տակավին, կենդանի յե ու կարծես մեռած, և շրջում է, փորպես ուրվական...

Անցածն անցավ...

Փողոցի անկյունում, իր նախկին պալատի առաջ՝ նա կանգ է առնում փոքր ինչ շունչ քաշելու:

Ո՞վ է այս փողոցի անկյունում իր տունը նորոգում... Անշուշտ խելագար է նա, փոր շինում է, նորոգում... Ո՞վ է կանգնած են տախտակամածի վրա...

— Հը, չեմ ճանաչում, յես Արշակն եմ, ես տունը շինողը...

— Արշակը... փոր Արշակը...

— Ես տունը շինողը... Միտդ ա, փոր ինձ խոստացար, ասիր տունը վերջացնելուց հետո համ վարձդ կը տամ, համ ել մի ձեռք շոր... Խոստացար ու վերջը չավիր... Ե՛հ, հիմի են ժամանակն անցավ, տունը մնաց իր շինողներին...

— Արշակ, դու ես... ի՞նչ ես շինում, ո՞ւմ համար ես շինում... Թարգը տուր: Ե՛հ, ինձ համար շինեցիր ես պալատը, բայց ո՞ւմ ձեռն ընկավ և ի՞նչ որն ընկա յես...

— Հա, ասեցի, իմացա՞ր... տունը մնաց իր շինողներին...

— Ե՛հ, Արշակ, դու ել են փուշ մարդկանց նման ես խոսում... Թարգը տուր, Թարգը...

Ասում է ու շտապում հեռանալ այս անհյուրընկալ վայրից, ուր ամեն մի հիշողություն փշի նման ծակում է նրան...

Իսկ Աբշակը բարձր ձայնով շվշվացնելով՝
շարունակում է սվաղելը:

Անցնում է նախկին տերը իր պալատի մո-
տով, յերբեմն այնքան սովոր և այժմ վորքան
խորթացած, անցնում է հագիվ վոտքերը քարշ
սալով...

Գնում է նա, անիծելով և՛ կեանքը և՛ աշ-
խորհը, վոր դարձել է նրա համար մութը գե-
րեզման...

Ու փողոցի անհանգիստ ժխորը՝ ասեւ միա-
բերան՝ կանչում է, թշոււմ նրա ականջին.

— Անցիւր... անցիւր...

1923 թ.

«ԿՈՄՍՈՒՆԱ» ՇԱՐՔԻՑ

ԿԱՐՄԻՐ ՀԵՐՈՍՈՒՅԻՆ

Պատմում են, վոր են մեծ կովի գիշերը, յերբ
վողջ քաղաքը ասես յեռում եր ու գորշ ալիքնե-
րով հոսում գետի գիւղերը՝ այն տենդոտ փո-
ղոցներով մեծերի հետ քայլում եր նորաբողբոջ
մի գույգ...



Աղջիկն ու տղան գնում էին ձեռք ձեռքի
տված և նոր զարթած թռչունների նման խոսում
ծղվում էին:

Նրանք թողել էին տանը իրենց մայրերի
խրատները՝—չմասնակցել մեծերի կովին և թի-
թեռների նման ձգտում էին գետի կրակը, գե-
տի վտանգը...

Նրանք անցնում էին ևն մեծ թաղերով,
մրոտ գեմքերի ու ջրուտ բազուկների են թա-
ղերով...

Ուր հսկա ծխնալույգները, նոթերը կիտած՝
խորհրդավոր լուծթյամբ դիտում էին ամեն ինչ...

Ուր խոնավ, մութ նկուղներում վաղուց
կուտակվել եր հսկայական մի բողբոջ, վոր հըր-
դեհի նման բռնկել իր վողջ քաղաքը:

Ամբոխի հետ նրանք հասան լայնատարած
մի հրապարակ, ուր խմբվել էին հազար-հազար-
ներ և անհանգիստ ծփում, սպասում էին...

Վերջապես մի ձայն յեկավ վերևից:

Ո՞վ եր խոսողը—մթնում չեր երևում.
միայն նրա կողմը նշմարվում եր փոքրիկ լապ-
տերի առկայծող լույսը...

Աղջիկն ու տղան նայում էին, աղանջները
լարում... Նրանց թվում եր, թե խոսողն են
կայծն է, թե շուտով կիջնեն յերկրի վրա բազ-
մաթիվ կայծեր, կիջնի լուսեղեն յերջանկու-
թյունը...

—Լսում եք են անեղ ձայնը. դարերով ճնշ-
ված ձայնն է, փոքր զարթել է հիմա...

Նա կանչում է իր հերոսներին, կանչում
է քանդելու և ստեղծելու...

Վողջ յերկիրը վառվում է նոր կրակով...

Ով ապրում է, զգում նոր կյանքի շունչը,
նա պիտի գա դեպի կռիվ, դեպի հաղթություն...

Հանկարծ ամբոխն իրար անցավ:

—Գալիս են, գալիս... անցավ բերանից բե-
րան...

Յեվ բոլորը շարժվեցին առաջ...



Գետնի վրա գալարվում էին վերափորները...

Կարմիր շորերով մի աղջիկ եր ընկած վի-
րավոր ու նրա մոտ մի տղա, փոքր կարծես իր շն-
չով ուզում եր կենդանացնել նրան...

Յեա շուտով կը մեռնեմ... ասում եր աղջիկը,
բայց յես կուզեյի դեռ երկար ապրել են կովող-
ների հետ... Յերբ յես կը մեռնեմ, տար ինձ...
կանգնեցրու կովողների առաջին շարքում... և
թող արևի շողքերը դեռ ելի փայլեն ինձ վրա...



Առավոտ եր...

Են մեծ փողոցում, հզոր բարրեկազի վրայից
նայում եր արևին կարմիր շորերով մի աղջիկ:

Կատաղի կռիվ եր...

Քանի, քանի անգամ թշնամին հարձակվեց
այդ դիրքի վրա, բայց աղջիկը կար ու կար իր
տեղում...

Նրա շուրջն ընկնում էին հերոսները, նո-
րերը գալիս՝ նրանց տեղերը բռնում, բայց աղջիկը
մնում եր անսասան իր դիրքում...

—Ո՞վ է են անյաղթ աղջիկը... հրաշք է...

Ջե, նա ես երկրից չե...

Ասում եր թշնամին ու յես նահանջում
«Կարմիր աղջկա» բարրեկազից...



Պատմում են, փոքր են մութ գիշերները, յերբ
հույսերը մարում են, կարմիր հերոսուհին իջնում
է, պտտում փողոցները:

Նա յերկաթե մուրճով բաղխում է դռները
ու դուրս է կանչում իր հերոսներին...

Կանչում է նորից դեպի մեծ կռիվը, դեպի
վերջին հաղթություն...

1913 թ.

ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ՔԵՉ ԱՅՍ ԳԼՈՒԽԸ...

Vivos voco!

Կանչում եմ ապրողներին:

Նստած հեռու աքսորավայր կղզում՝ մենք հիշում եյինք անցած որերը կոմմունայի...

Ու ամեն հիշելիս կարդում եյինք են թանգագին նամակը, վորի վրա գեռ մնում եյին արյան հետքերը:

Վորքան մտերիմ եր և վորքան սրտակից այդ թռչնած թռչված...

Նրա յետևի յերեսից նայում եր մի պատկեր, մի գեղեցիկ գլուխ՝ իր խոհուն ճակատով:

Ու ամեն անգամ, յերբ կարդում եյինք են արյունոտ առկերը, մեզ համակում եյին կոմմունայի վերջին ժամերը...

*
* *

«Սիրելի ընկեր,

Ուղարկում եմ քեզ այս գլուխը, վոր ուզում են կտրել...

Ուղարկում եմ քեզ իմ պատկերը, վոր յես ինքս նկարեցի:

Պատմեմ արդյեռք մեր որհասական ժամերից...

Այսօր առավոտից կոմմունայի վերջին մահիկաններին ձգել են մի դարպաս, վորտեղ մեզ միախառնել են մեր սպանված ընկերների հետ:

Քայլում եմ ընկերներին արյունի վրայով և ղիպչում նրանց ղիակներին...

Գիտեմ, մենք ել կը գնանք նրանց մոտ... Մեր ճակատներին ել մահվան զատավճիռն և գրած...

Կեսօրին ներս մտավ Վերսայլի սպաններից մեկը՝ արբեցած, գազազած անթիվ սպանուհիներից:

Անցավ դարպասով, ապա կանգ առավ մի ղիակի առաջ, վորի ուղեղը փռված եր գեանին:

Վտաքի կոպիտ հարվածով նա ցրեց ուղեղն ու ասաց ղիվային հեգնանքով.

— Նրանք սրանով մտածում եյին... Հա... հա...

Նայում եյի սպայի հղիացած գեմքին ու մտածում.

Կանցնեն ժամեր, գուցե և րոպեներ, ու յես ել կընկնեմ են կոպիտ վտաքերի տակ...

Ու մի միտք անցավ գլխովս՝ ուղարկել քեզ լավագույնը, վոր կը մնա մահիցս հետո՝ իմ պատկերը՝ նկարած իմ ձեռքով...

Թող այնուհետև վորքան կուզեն քաշկռտեն գեանին իմ գլուխը:

Նա կապրի ու կը խորհի իր ապրող ընկերների հետ...

Կը պատմե նրանց կոմմունայի վերջին ժամերից...

Ու պատգամներ կը տա, վոր մեր ընկած ընկերների խորունկ դատը հանձնեն գալիք որերին...

Ո՛վ ընկերներ, կը մոռանաք յերբեք Վերսայլի դահիճներին...

Կը թողնեք յերբեք, վոր մեր լավագույն իղձերը ցրվեն կոպիտ վտաքերի տակ...

Մնաց բարով, ընկեր:

Մեռնողները քեզ բարեւում են...

Ուղարկում եմ քեզ այս գլուխը, փոր ուզում
են կտրել...»:

*
*
*

Նստած հեռու աքսորափայլ կղզում՝ մենք
կարգում էյինք են նամակն ու խորհում կոմմուն-
նայի անցած որերից:

Ու մեր խոհերին լուռ մասնակից էր այն
պատկերը՝ մեր մտերիմ ընկերոջ...

Նայում էր նա որհասական շեշտով ու հա-
զորդում են հզոր պատգամն ընկած հերոսների՝

— Վոր նրանց խորունկ դասն ուղղենք դա-
լիք որերին...

1923 թ.

ՎԵՐՋԻՆ ԲԱՐՐԻԿԱԴԵ

Յես հիշում եմ, յես սիրում եմ
այն ատենը,
Յերբ կեռասենին ե կարմրում...

Մայիսին եր, կոմմունայի վերջին ուր...

Հերոսական կռվից հետո ընկնում ե գերեզ-
մանատան դիրքը և կոմմունայի վերջին բեկոր-
ները դիմում են դեպի Ֆոնտեն-ո-Ռուա փողոցի
բարրիկադը:

Այնտեղ են հավաքվել կոմմունայի վերջին
աստղերը՝ զարդարված կարմիր ժապավեններով,
և պատրաստվում են որհասական կռվի...

Հսկայական կարմիր դրոշմ ծածանվում ե
բարրիկադի վրա...

Որհասի մեջ ե և մոտակա Սեն-Մոր փողո-
ցի դիրքը. նրանից վոչ հեռու մյուս բարրիկադի
վրա մնացել ե միայն մի մարդ, բայց համառու-
թյամբ շարունակում ե կռվել...

Մի փոքր անց՝ հեկհե վազում ե դեպի կար-
միր բարրիկադը մի աղջիկ:

Յես գալիս եմ ձեզ ոգնելու, կանչում ե
նա... Յես Սեն-Մորիցն եմ գալիս... նա արդեն
լնկավ:

— Այստեղ ամենավտանգավոր դիրքն ե.
մի գալ այստեղ:

— Վոչ, յես յեկել եմ ոգնելու և պիտի
ոգնեմ...

Վերջին րոպեներն էյին:

Հերոսները լցրին թնդանոթները ուղղա-
մթերքի մնացորդներով ու վերջին անգամ ար-
ձակեցին...

Լավեց արհասական վորոտը, և ապա ամեն ինչ
լոեց:

Կոմմունան ընկավ...

Բայց ղեռ յերկար տարիներ հիշվում էր են
կարմիր բարրիկադն ու են անձնվեր հերոսուհին,
վոր յեկել էր օգնելու...

Յեվ մի բանաստեղծ մի յերգ հորինեց նրա
մասին, վոր սկսվում և վերջանում էր այսպես.

«Յես հիշում եմ, յես սիրում եմ այն ատենը,

Յերբ կիռասենին և կարմրում...»:

Ու յերկար տարիներ բանաստեղծը տեսնում
էր կեռասենին կարմրելու ժամանակ մի աղջիկ,
վոր շրջում էր վերջին բարրիկադները՝ նրանց օգ-
նելու համար...

Յեվ վորքան տխրում էր աղջիկը, յերբ նոր
բարրիկադներ չէր գտնում, վոր նրանց օգնի...

1923 թ.

Ա Ն Մ Ա Հ Ր

Ընկավ կոմմունան...

Ու բյուրավոր գիւղերն իջան գերեզման...

Սակայն են որվանից, յերբ այդ հերոսները
տարան իրենց հետ մարդկանց չկատարված իղ-
ձերը, նրանց գերեզմանները ել հանգիստ չառան...

Ու անընդհատ շարքերով գալիս էյին տեսու-
թյան, գալիս էյին պաշտելու վորպես վաղեմի
սրբավայրերը.

Ձինվորները կոպիտ հայհոյանքներով հեռաց-
նում էյին այցելող կանանց, բայց ով կարող էր
նրանց առաջն առնել:

Սակայն դահիճների համար սարսափելին
այն էր, վոր շատ չանցած՝ գերեզմանները սկսե-
ցին կարմրել...

Անձնվեր կանայք բերում էյին իրենց հետ
ծաղիկների սերմեր ու ծածուկ սփռում գերեզ-
մանների վրա...

Ու ասում էյին, թե այդ կարմիր ծաղիկ-
ները են չկատարված իղձերն էյին, վոր խոսում
էյին գերեզմաններից...

*
* *

Ո՞վ և այն համառ կինը, վոր միշտ թարմ
և պահում այդ ծաղիկները...

Վոր գիշերներով պատում է գերեզմանների
շուրջը, կարծես հսկում է նրանց...

Ու տարիներն անցնում են, բայց գերեզ-

27340

ՀՀ Ազգային գրադարան



NL0326184

21.340

891.99

14-82